

**ՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՐԻՔՆԵՐԻ ՀԱՄԱՐ ԱՎՏՈՄԵՔԵՆԱՆԵՐԻ ՎԵՐԱՆՈՐՈԳՄԱՆ
ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՄԱՏՈՒՑՄԱՆ
ՊԵՏԱԿԱՆ ԳՆՄԱՆ ՊԱՅՄԱՆԱԳԻՐ
N ՀՀՎԱ-ԳՀԾՁԲ-20/31-1**

ք. Երևան

«23» հունիսի 2020 թ.

Վարչապետի աշխատակազմն, ի դեմս վարչապետի աշխատակազմի գործերի կառավարիչ Վահան Պապիկյանի, որը գործում է աշխատակազմի կանոնադրության հիման վրա (այսուհետ՝ Պատվիրատու), մի կողմից, և «Գարանտերվիս» ՍՊԸ-ն, ի դեմս տնօրեն Մնացական Նիկողոսյանի, որը գործում է Ընկերության կանոնադրության հիման վրա (այսուհետ՝ Կատարող), մյուս կողմից, կնքեցին սույն պայմանագիրը հետևյալի մասին:

1. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԱՈՒՐԿԱՆ

1.1 Պատվիրատուն հանձնարարում է, իսկ Կատարողը ստանձնում է ավտոմեքենաների վերանորոգման ծառայությունների մատուցման պարտավորությունը (այսուհետ՝ ծառայություն)՝ համաձայն սույն պայմանագրի (այսուհետ՝ պայմանագիր) անբաժանելի մասը կազմող N1 և N1.1 հավելվածներով սահմանված Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցի պահանջների:

1.2 Ծառայությունը մատուցվում է պայմանագրի N1 և N1.1 հավելվածներով սահմանված Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցին համապատասխան և սահմանված ժամկետներով:

2. ԿՈՂՄԵՐԻ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԸ ԵՎ ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

2.1 Պատվիրատուն իրավունք ունի՝

2.1.1 Ցանկացած ժամանակ ստուգել Կատարողի կողմից մատուցվող ծառայության ընթացքը և որակը՝ առանց միջամտելու Կատարողի գործունեությանը.

2.1.2 Եթե մատուցվել է պայմանագրի N1 և N1.1 հավելվածներում նշված Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցին չհամապատասխանող ծառայություն.

ա) Չընդունել ծառայությունը՝ իր հայեցողությամբ սահմանելով անպատշաճ որակի ծառայությունը պայմանագրին համապատասխանող ծառայությամբ անհատույց փոխարինման ողջամիտ ժամկետ և պահանջել Կատարողից վճարելու պայմանագրի 5.2 կետով նախատեսված տուգանքը, ինչպես նաև 5.3 կետով նախատեսված տույժը.

բ) Հրաժարվել պայմանագիրը կատարելուց և պահանջել վերադարձնելու ծառայության համար վճարված գումարը և պահանջել Կատարողից վճարելու պայմանագրի 5.2 կետով նախատեսված տուգանքը.

2.1.3 Միակողմանի լուծել պայմանագիրը, եթե Կատարողն էականորեն խախտել է պայմանագիրը: Կատարողի կողմից պայմանագիրը խախտելն էական է համարվում, եթե՝

ա) մատուցված ծառայությունը չի համապատասխանում պայմանագրի N1 և N1.1 հավելվածներով սահմանված պահանջներին,

բ) խախտվել է ծառայության մատուցման ժամկետը:

2.2 Պատվիրատուն պարտավոր է՝

2.2.1 Քննարկել և ընդունել Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցին համապատասխան մատուցված ծառայության արդյունքը, իսկ ծառայության արդյունքում թերություններ հայտնաբերելու դեպքերում՝ այդ մասին անհապաղ գրավոր հայտնել Կատարողին:

2.2.2 Ծառայության արդյունքն ընդունելու դեպքում Կատարողին վճարել վերջինիս վճարման ենթակա գումարները, իսկ ժամկետի խախտման դեպքում՝ նաև պայմանագրի 5.5 կետով նախատեսված տույժը:

2.3 Կատարողն իրավունք ունի՝

2.3.1 Պատվիրատուից պահանջել վճարելու իրեն վճարման ենթակա գումարները, իսկ Պատվիրատուի կողմից պայմանագրի 4.2 կետում նշված ժամկետի խախտման դեպքում նաև պայմանագրի 5.5 կետով նախատեսված տույժը:

2.4 Կատարողը պարտավոր է՝

2.4.1 Պայմանագրի N1 և N1.1 հավելվածներով սահմանված պայմաններով ապահովել ծառայության մատուցումը՝ ղեկավարվելով գործող օրենսդրությամբ:

2.4.2 Պայմանագրով նախատեսված դեպքերում վճարել պայմանագրի 5.2 և 5.3 կետերով նախատեսված տույժը և տուգանքը:

2.4.3 Որակավորման և պայմանագրի կատարման ապահովման գործողության ընթացքում լուծարման կամ սնանկացման գործընթաց սկսելու դեպքում դրա մասին նախապես գրավոր տեղեկացնել Պատվիրատուին:

3. ԾԱՌԱՅՈՒԹՅԱՆ ՀԱՆՁՆՄԱՆ ԵՎ ԸՆԴՈՒՆՄԱՆ ԿԱՐԳԸ

3.1 Մատուցված ծառայությունն ընդունվում է Պատվիրատուի և Կատարողի միջև հանձնման-ընդունման արձանագրության ստորագրմամբ: Ծառայությունը Պատվիրատուին հանձնելու փաստը ֆիքսվում է Պատվիրատուի և Կատարողի միջև երկկողմ հաստատված փաստաթղթով՝ նշելով փաստաթղթի կազմման ամսաթիվը:

Մինչև պայմանագրով ծառայության մատուցման համար նախատեսված օրը ներառյալ Կատարողը Պատվիրատուին է տրամադրում իր կողմից ստորագրված՝ ծառայությունը Պատվիրատուին հանձնելու փաստը ֆիքսող փաստաթուղթը (հավելված N 3.1), իսկ էլեկտրոնային գնումների armeps համակարգի միջոցով (գործողության իրականացման ձեռնարկը տեղադրված է www.procurement.am հասցեով գործող կայքի «էլեկտրոնային գնումներ» բաժնում)՝ նաև հանձնման-ընդունման արձանագրությունը (հավելված N 3): Ընդ որում Կատարողը հանձնման-ընդունման արձանագրությունը չի կնքում, հաստատում է էլեկտրոնային ստորագրությամբ՝ լրացնելով միայն այն սյունակները, որոնք վերաբերում են իր տվյալներին (լրացման կարգը տեղադրված է www.procurement.am հասցեով գործող կայքի «Օրենսդրություն» բաժնի «Ֆինանսների նախարարի հրամաններ» ենթաբաժնում):

3.2 Եթե մատուցված ծառայությունը համապատասխանում է պայմանագրի պայմաններին, Պատվիրատուն պայմանագրի 3.1 կետում նշված փաստաթղթերը ստանալու օրվան հաջորդող աշխատանքային օրվանից հաշված 10 աշխատանքային օրվա ընթացքում ստորագրում և էլեկտրոնային գնումների armeps համակարգի միջոցով Կատարողին է տրամադրում իր կողմից ստորագրված հանձնման-ընդունման արձանագրությունը և դրա ստորագրման համար հիմք հանդիսացած դրական եզրակացությունը:

3.3 Եթե մատուցված ծառայությունը կամ դրա մի մասը չի համապատասխանում պայմանագրի պայմաններին, ապա Պատվիրատուն չի ստորագրում հանձնման-ընդունման արձանագրությունը և պայմանագրի 3.2 կետում նշված ժամկետում էլեկտրոնային գնումների armeps համակարգի միջոցով Կատարողին հետ է վերադարձնում հանձնման-ընդունման արձանագրությունը և դրա չստորագրման համար հիմք հանդիսացած բացասական եզրակացությունը: Սույն կետի կիրառման դեպքում Պատվիրատուն ձեռնարկում է նման իրավիճակի համար պայմանագրով նախատեսված միջոցները և Կատարողի նկատմամբ կիրառում է պայմանագրով նախատեսված պատասխանատվության միջոցներ:

3.4 Եթե պայմանագրի 3.2 կետով սահմանված ժամկետում Պատվիրատուն չի ընդունում մատուցված ծառայությունը կամ չի մերժում դրա ընդունումը, ապա մատուցված ծառայությունը համարվում է ընդունված և պայմանագրի 3.2 կետով սահմանված վերջնաժամկետին հաջորդող աշխատանքային օրը Պատվիրատուն էլեկտրոնային գնումների համակարգի միջոցով Կատարողին է տրամադրում իր կողմից ստորագրված հանձնման-ընդունման արձանագրությունը:

4. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԳԻՆԸ

4.1. Սույն պայմանագրով Կատարողի մատուցման ենթակա ծառայության առավելագույն գինը կազմում է 500 000 (հինգ հարյուր հազար) ՀՀ դրամ, ներառյալ ԱԱՀ-ն:

Գինը ներառում է Կատարողի կողմից իրականացվող բոլոր ծախսերը՝ այդ թվում հարկերը, տուրքերը և ՀՀ օրենսդրությամբ սահմանված այլ վճարները:

Ծառայության մատուցման գինը կայուն է և Կատարողն իրավունք չունի պահանջել ավելացնելու, իսկ Պատվիրատուն նվազեցնելու այդ գինը:

4.2 Պատվիրատուն իրեն մատուցած ծառայության դիմաց վճարում է ՀՀ դրամով անկանխիկ՝ դրամական միջոցները Կատարողի հաշվարկային հաշվին փոխանցելու միջոցով: Դրամական միջոցների փոխանցումը կատարվում է հանձնման-ընդունման արձանագրության հիման վրա՝ պայմանագրի վճարման ժամանակացույցով (հավելված N 2) նախատեսված չափերով և ամիսներին: Եթե արձանագրությունը կազմվում է տվյալ ամսվա 20-ից հետո և այդ ամսում վճարման ժամանակացույցով նախատեսված են ֆինանսական միջոցներ, ապա վճարման իրականացվում է մինչև 30 աշխատանքային օրվա ընթացքում, բայց ոչ ուշ, քան մինչև տվյալ տարվա դեկտեմբերի 30-ը:

Ավտոմեքենաների վերանորոգման ծառայությունների մատուցման դիմաց վճարումներն իրականացվում են հետևյալ բանաձևով՝ $V_9 = U_9 / L_9 \times D \times P$, որտեղ՝

V_9 -ն պայմանագրով սահմանված առանձին տեսակի ծառայությունների մատուցման դիմաց վճարվող գումարն է:

U_9 -ն ընտրված մասնակցի առաջարկած հանրագումարային գինն է՝ 4 108 000 (չորս միլիոն մեկ հարյուր ութ հազար) ՀՀ դրամ:

L_9 -ն ծառայության մատուցման համար սահմանված առավելագույն միավոր գների հանրագումարն է 5 135 740 (հինգ միլիոն մեկ հարյուր երեսունհինգ հազար յոթ հարյուր քառասուն):

D -ն մատուցված ծառայության առավելագույն միավորի գինն է:

P -ն մատուցված ծառայության քանակն է:

Սույն պայմանագրի հավելված N1.1-ում գները ներկայացված են վերոնշյալ բանաձևի կիրառմամբ:

5. ԿՈՂՄԵՐԻ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅՈՒՆԸ

5.1 Կատարողը պատասխանատվություն է կրում ծառայության մատուցման՝ պայմանագրի պահանջների պահպանման համար:

5.2 Պայմանագրի N1 և N1.1 հավելվածներում նշված տեխնիկական բնութագրին չհամապատասխանող ծառայություն մատուցելու յուրաքանչյուր դեպքում Կատարողից գանձվում է տուգանք՝ պայմանագրի 4.1 կետում նախատեսված գումարի 0,5 (զրո ամբողջ հինգ տասնորդական) տոկոսի չափով: Ընդ որում տուգանքը հաշվարկվում է նաև ծառայությունը սույն պայմանագրով սահմանված ժամկետում մատուցելու, սակայն պատվիրատուի կողմից այդ չընդունվելու դեպքում:

5.3 Պայմանագրով նախատեսված ծառայության մատուցման ժամկետը խախտելու դեպքում Կատարողից յուրաքանչյուր ուշացված աշխատանքային օրվա համար գանձվում է տույժ՝ մատուցման ենթակա, սակայն չմատուցված ծառայության գնի 0,05 (զրո ամբողջ հինգ հարյուրերորդական) տոկոսի չափով:

5.4 Պայմանագրի 5.2 և 5.3 կետերով նախատեսված տուգանքը և տույժը հաշվարկվում և հաշվանցվում են ծառայություն մատուցելու արդյունքում Կատարողին վճարման ենթակա գումարների հետ:

5.5 Պատվիրատուի կողմից պայմանագրի 4.2 կետով նախատեսված ժամկետի խախտման դեպքում Պատվիրատուի նկատմամբ յուրաքանչյուր ուշացված աշխատանքային օրվա համար հաշվարկվում է տույժ՝ վճարման ենթակա, սակայն չվճարված գումարի 0,05 (զրո ամբողջ հինգ հարյուրերորդական) տոկոսի չափով:

5.6 Պայմանագրով չնախատեսված դեպքերում կողմերն իրենց պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու համար պատասխանատվության են ենթարկվում ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով:

5.7 Տույժերի և (կամ) տուգանքի վճարումը Կողմերին չի ազատում իրենց պայմանագրային պարտավորությունները լրիվ կատարելուց:

6. ԱՆՀԱՂԹԱՀԱՐԵԼԻ ՈՒԺԻ ԱԶԴԵՑՈՒԹՅՈՒՆ (ՖՈՐՍ-ՄԱԺՈՐ)

Սույն պայմանագրով և սույն պայմանագրի հիման վրա կնքված համաձայնագրերով պարտավորություններն ամբողջությամբ կամ մասնակիորեն չկատարելու համար կողմերն ազատվում են պատասխանատվությունից, եթե դա եղել է անհաղթահարելի ուժի ազդեցության հետևանքով, որը ծագել է սույն պայմանագիրը կնքելուց հետո, և որը կողմերը չէին կարող կանխատեսել կամ կանխարգելել: Այդպիսի իրավիճակներ են երկրաշարժը, ջրհեղեղը, հրդեհը, պատերազմը, ռազմական և արտակարգ դրություն հայտարարելը, քաղաքական հուզումները, գործադուլները, հաղորդակցության միջոցների աշխատանքի դադարեցումը, պետական մարմինների ակտերը և այլն, որոնք անհնարին են դարձնում սույն պայմանագրով պարտավորությունների կատարումը: Եթե արտակարգ ուժի ազդեցությունը շարունակվում է 3 (երեք) ամսից ավելի, ապա կողմերից յուրաքանչյուրն իրավունք ունի լուծել պայմանագիրը՝ այդ մասին նախապես տեղյակ պահելով մյուս կողմին:

7. ԱՅԼ ՊԱՅՄԱՆՆԵՐ

7.1 Պայմանագիրն ուժի մեջ է մտնում կողմերի ստորագրման պահից և գործում է մինչև կողմերի պայմանագրով ստանձնած պարտավորությունների ողջ ծավալով կատարումը:

Պայմանագրով նախատեսված կողմերի իրավունքների և պարտականությունների կատարման պայման է հանդիսանում պայմանագիրը ՀՀ ֆինանսների նախարարության կողմից հաշվառված լինելու հանգամանքը:

7.2 Պայմանագրից ծագած կողմի վճարային պարտավորությունը չի կարող դադարել այլ պայմանագրից ծագած՝ հակընդդեմ պարտավորության հաշվանցով, առանց կողմերի գրավոր և կնիքով հաստատված

համաձայնության: Պայմանագրից ծագած պահանջի իրավունքը չի կարող փոխանցվել այլ անձի, առանց պարտապան կողմի գրավոր համաձայնության:

7.3 Այն դեպքում, երբ օրենքով նախատեսված կարգով օրենքի պահանջների կատարման նկատմամբ հսկողության կամ վերահսկողության կամ բողոքների ըննության արդյունքում արձանագրվում է, որ գնման գործընթացում, մինչև պայմանագրի կնքումը, Կատարողը ներկայացրել է կեղծ փաստաթղթեր (տեղեկություններ և տվյալներ), կամ վերջինիս ընտրված մասնակից ճանաչելու մասին որոշումը չի համապատասխանում Հայաստանի Հանրապետության օրենսդրությանը, ապա այդ հիմքերն ի հայտ գալուց հետո Պատվիրատուն միակողմանիորեն լուծում է պայմանագիրը, եթե արձանագրված խախտումները մինչև պայմանագրի կնքումը հայտնի լինելու դեպքում գնումների մասին Հայաստանի Հանրապետության օրենսդրության համաձայն հիմք կհանդիսանային պայմանագիրը չկնքելու համար: Ընդ որում, Պատվիրատուն չի կրում պայմանագրի միակողմանի լուծման հետևանքով Կատարողի համար առաջացող վնասների կամ բաց թողնված օգուտի ռիսկը, իսկ վերջինս պարտավոր է Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված կարգով փոխհատուցել իր մեղքով Պատվիրատուի կրած վնասներն այն ծավալով, որի մասով պայմանագիրը լուծվել է:

7.4 Պայմանագրի հետ կապված վեճերը ենթակա են ըննության Հայաստանի Հանրապետության դատարաններում:

7.5 Պայմանագրում փոփոխություններ և լրացումներ կարող են կատարվել միայն Կողմերի փոխադարձ համաձայնությամբ՝ համաձայնագիր կնքելու միջոցով, որը կհանդիսանա պայմանագրի անբաժանելի մասը:

Արգելվում է պայմանագրում, իսկ եթե պայմանագրի գինը գործոնային է, ապա նաև այդ պայմանագրին կից հաջորդող յուրաքանչյուր տարիներին կնքված համաձայնագրում կատարել այնպիսի փոփոխություններ, որոնք հանգեցնում են գնվող ծառայության ծավալների կամ ձեռք բերվող ծառայության միավորի գնի կամ պայմանագրի գնի արհեստական փոփոխման:

Պայմանագրի կողմերից անկախ գործոնների ազդեցությամբ պայմանագրի փոփոխման յուրաքանչյուր դեպք սահմանում է Հայաստանի Հանրապետության կառավարությունը:

7.6 Ծառայության մատուցման ժամկետը կարող է երկարաձգվել մինչև պայմանագրով այդ ժամկետը լրանալը՝ Կատարողի առաջարկության առկայության դեպքում՝ պայմանով, որ Պատվիրատուի մոտ չի վերացել ծառայության օգտագործման պահանջը, իսկ Կատարողի առաջարկությունը ներկայացվել է ոչ ուշ, քան պայմանագրով ի սկզբանե ծառայությունների մատուցման համար սահմանված ժամկետը լրանալուց առնվազն 5 օրացուցային օր առաջ: Ընդ որում սույն կետով սահմանված դեպքում ծառայության մատուցման ժամկետը կարող է երկարաձգվել մեկ անգամ մինչև 30 օրացուցային օրով, բայց ոչ ավել քան պայմանագրով սահմանված ժամկետն է:

7.7 Պայմանագրի պատշաճ կատարման պայմաններում կողմերի (Կատարող կամ Պատվիրատու) օգուտները (խնայողություններ) կամ կրած վնասները տվյալ կողմի օգուտը կամ կրած վնասն են:

Պայմանագրի կողմերի՝ երրորդ անձանց նկատմամբ պարտավորությունները՝ ներառյալ պայմանագրի կատարման շրջանակում Կատարողի կնքած այլ գործարքները և դրանցից բխող պարտավորությունները, դուրս են պայմանագրի կարգավորման դաշտից և չեն կարող ազդել պայմանագրի կատարման արդյունքն ընդունելու վրա: Այդ գործարքների և դրանցից բխող պարտավորությունների կատարման հետ կապված հարաբերությունները կարգավորվում են այդ գործարքների հետ կապված հարաբերությունները կարգավորող նորմերով, և դրանց համար պատասխանատու է Կատարողը:

7.8 Պայմանագիրը չի կարող փոփոխվել կողմերի պարտավորությունների մասնակի չկատարման հետևանքով կամ ամբողջությամբ լուծվել կողմերի փոխադարձ համաձայնությամբ՝ բացառությամբ՝ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով ծառայության մատուցման համար անհրաժեշտ ֆինանսական հատկացումների նվազեցման դեպքերի: Ընդ որում, պայմանագրի կողմերի՝ պարտավորությունների մասնակի չկատարման կամ ամբողջությամբ լուծման կողմերի փոխադարձ համաձայնությունն անհրաժեշտ է ձեռք բերել նախքան Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով ծառայության մատուցման համար անհրաժեշտ ֆինանսական հատկացումների նվազեցումը:

7.9 Կատարողի կողմից ստանձնած պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու հիմքով պայմանագիրն ամբողջությամբ կամ մասնակի միակողմանի լուծելու մասին ծանուցումը Պատվիրատուն հրապարակում է www.procurement.am հասցեով գործող ինտերնետային կայքի «Պայմանագրերը միակողմանի լուծելու մասին ծանուցումներ» բաժնում՝ նշելով հրապարակման ամսաթիվը: Կատարողը, պայմանագիրը միակողմանի լուծելու վերաբերյալ, համարվում է պատշաճ ծանուցված՝ ծանուցումը, սույն կետով սահմանված հրապարակվելուց հաջորդող օրվանից: Պայմանագիրն ամբողջությամբ կամ մասնակի միակողմանի լուծելու մասին ծանուցումը տեղեկագրում հրապարակվելու օրը Պատվիրատուն այն ուղարկվում է նաև Կատարողի էլեկտրոնային փոստին:

7.10 Սույն պայմանագրի կապակցությամբ ծագած վեճերը լուծվում են բանակցությունների միջոցով: Համաձայնություն ձեռք չբերելու դեպքում վեճերը լուծվում են ՀՀ դատարաններում:

7.11 Սույն պայմանագիրը կազմված է 5 էջից, կնքվում է երկու օրինակից, որոնք ունեն հավասարազոր իրավաբանական ուժ: Սույն պայմանագրի N 1, N1.1, N 2, N 3 և N 3.1 հավելվածները հանդիսանում են պայմանագրի անբաժանելի մասը, յուրաքանչյուր կողմին տրվում է պայմանագրի մեկ օրինակ:

7.12 Սույն պայմանագրի նկատմամբ կիրառվում է Հայաստանի Հանրապետության իրավունքը:

8. ԿՈՂՄԵՐԻ ՀԱՍՑԵՆԵՐԸ, ԲԱՆԿԱՅԻՆ ՎԱՎԵՐԱՊԱՅՄԱՆՆԵՐԸ ԵՎ ԱՏՈՐԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

Պ Ա Տ Վ Ի Ր Ա Տ ՈՒ

Վարչապետի աշխատակազմ
ք. Երևան Հանրապետության հր.,
Կառավարական տուն 1
ՀՀ ՖՆ գործառնական վարչ.
ՀՀ 900011022085
ՀՎՀՀ 02505554

Կ Ա Տ Ա Ր Ո Ղ

«Գարանտսերվիս» ՍՊԸ
ք. Երևան, Թբիլիսյան խճ. 20
«Կոնվերսանկ» ՓԲԸ
ՀՀ 193004674290
ՀՎՀՀ 00840437

(ստորագրություն)

Կ.Տ.



Մ.Նիկողոսյան

(ստորագրություն)



ՏԵԽՆԻԿԱԿԱՆ ԲՆՈՒԹԱԳԻՐ - ԳՆԱՆ ժԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ*

ՀՀ դրամ

Ծառայության							
հրավերով նախատեսված չափաբաժնի համարը	գնումների պլանով նախատեսված միջանցիկ ծածկագիրը՝ ըստ ԳՄԱ դատակարգման (CPV)	տեխնիկական բնութագիրը	չափման միավորը	ընդհանուր առավելագույն գինը/ՀՀ դրամ	ընդհանուր քանակը	մատուցման	
						հասցեն	ժամկետը
1	50111130/34	Ավտոմեքենաների վերանորոգման ծառայություն Snyտաա Lևեղ Բրուգեր /Toyota Land Cruiser/ 200, 4.0 2008-2013 ա/մ նորոգման ծառայություն՝ համաձայն հավելված 1.1	դրամ	500 000	1	Ք.Երևան, Թբիլիսյան խճ. 20	Պայմանագիրն ուժի մեջ մտնելուց մինչև 2020թ. դեկտեմբերի 25-ը

*Ծառայությունները կմատուցվեն ըստ Պատվիրատուի պահանջի՝ Կատարողին պահանջի ծագման մասին տեղեկացնելու պահից 2 օրվա ընթացքում՝ առանց պահեստամասի փոխարինման ծառայության և առավելագույնը 5 աշխատանքային օրվա ընթացքում՝ պահեստամասի փոխարինման ծառայության դեպքում, քաջաոությամբ այն դեպքերի, երբ փոխամամայնությամբ ավելի երկար ժամկետ է սահմանվում:
 **Կատարողը պարտավոր է Պատվիրատուի պահանջով տրամադրել տեղեկանք՝ Պատվիրատուի տրանսպորտային միջոցը Կատարողի տեխսպասարկման կայան ներկայացնելու օրվա և ժամի մասին:
 ***Պարտադիր պայման է՝ ընթացիկ նորոգման համար անհրաժեշտ պահեստամասերի, քայլողերի և այլ օժանդակ նյութերի առկայությունը, ինչպես նաև դրանց չօգտագործված լինելը:
 ****Վճարումը կիրականացվի փաստացի մատուցված ծառայության դիմաց:
 *****Տեխսպասարկման կայանը պետք է հազեցած լինի անբարձրիներով (дочкрат)՝ առնվազն 3.5 տոննա բարձրացնելու կարողությամբ:
 Ծառայությունների միավոր գները հաշվարկված են սույն Պայմանագրի 4.2 կետով սահմանված բանաձևի համաձայն և ներկայացված են հավելված 1.1-ում:

* ծառայության մատուցման վերջնաժամկետը չի կարող ավել լինել, քան փոխադրվա դեկտեմբերի 25-ը:

Պ Ա Տ Վ Ի Ր Ա Տ ՈՒ
 Վարչապետի աշխատակազմ
 ք.Երևան Հանրապետության հր.,
 Կառավարական տուն 1
 ՀՀ ՖՆ գործառնական վարչ.
 ՀՀ 900011022085
 ՀՎՀՀ 02505554

Կ Ա Տ Ա Ր Ո Ղ
 «Գարանտսերվիս» ՍՊԸ
 ք. Երևան, Թբիլիսյան խճ. 20
 «Կոնվերսյանկ» ՓԲԸ
 Հ/Հ՝ 193004674290
 ՀՎՀՀ՝ 00840437


 (ստորագրություն)
 Վ.Տ.


 Մ.Ն.Կրկողայան
 (ստորագրություն)
 «ԳԱՐԱՆՏՍԵՐՎԻՍ» ՍՊԸ
 «ГАРАНТСЕРВИС» ООО
 «GARANTSERVIS» LLC

ՏԵԽՆԻԿԱԿԱՆ ԲՆՈՒԹԱԳԻՐ

ՀՀ դրամ

Հ/Հ	Ընթացիկ, միջին և հիմնական նորոգման աշխատանքների անվանումները	Չ/Բ 1*
		Լենդ կրաուզեր J200, 2008-2013
1	2	3
1	Բոնկման համակարգի ստուգում	3999
2	Կգորդման համակարգի ստուգում	3999
3	Բաշխիչ տուփի աշխատանքի ստուգում	3999
4	Էլեկտրական համակարգի աշխատանքի ստուգում	3999
5	Արգելակման համակարգի աշխատանքի ստուգում	3999
6	Գնեկավարման համակարգի աշխատանքի ստուգում	3999
	I. Շարժիչ	0
7	Շարժիչի համում և տեղադրում	31995
8	Շարժիչի քանդում արատավորում և հավաքում	55992
9	Շարժիչի հիմնական նորոգում, ներառյալ բոլոր աշխատանքները	55992
10	Շարժիչի գլխիկի համում տեղադրում միջադիրի փոխարինումով	31995
11	Շարժիչի գլխիկի նորոգում, եռակցում հղկումով	14398
12	Շարժիչի գլխիկի փականների փոխարինում հղկումով և խտարուկերով 1 կ-տ	19997
13	Վառոցքի մոմի բնիկի նորոգում	880
14	Շարժիչի փականների զսպանակների փոխարինում	880
15	Փականների խցուկների փոխարինում 1 կ-տ	880
16	Հրիչների կամ հիդրոհրիչների փոխարինում 1 կ-տ	4799
17	Շարժիչի մխոցաօղերի, հիմնական և շարժաքնի ներդրակների փոխարինում	25596
18	Մնկածն լիսեռի հղկում	14398
19	Մնկածն լիսեռի համում տեղադրում կամ փոխարինում	960
20	Մնկածն լիսեռի ներդրակների փոխարինում 1 կ-տ	4799
21	Մնկածն լիսեռի ատամնաանիվի փոխարինում	960
22	Մնկածն լիսեռի ուղղում	800
23	Մնկածն լիսեռի առջևի խցուկի փոխարինում	7679
24	Մնկածն լիսեռի հետևի խցուկի փոխարինում	4799
25	Շարժիչի բլոկի փոխարինում	11998
26	Շարժիչի գլանի փոխարինում (гидрошка)	13598
27	Մխոցի փոխարինում 1 հատ	9599
28	Բաշխիչ լիսեռի համում և տեղադրում կամ փոխարինում	1920
29	Փոկանիվի փոխարինում	2480
30	Շարժիչի ատամնավոր փոկի փոխարինում	3999
31	Շարժիչի շրթաչի փոխարինում	11998
32	Շարժիչի քարտերի նորոգում (եռակցում)	9599
33	Շարժիչի քարտերի փոխարինում, միջադիրի փոխարինումով	960
34	Շարժիչի քարտերի միջադիրի փոխարինում	5599
35	Շարժիչի քարտերի համում, տեղադրում մաքրումով	17597
36	Շարժիչի յուղի մղիչի փոխարինում	4799
37	Շարժիչի յուղի մղիչի նորոգում, մաքրում	7999

1	2	3
38	Շարժիչի յուղի մղիչի մաքրում	5679
39	Շարժիչի յուղի ռադիատորի փոխարինում	960
40	Յուղի ծորակի փոխարինում	800
41	Օդաքաշակ փոխարինում	960
42	Բ/լիսեռի կափարիչի հանում և տեղադրում կամ փոխարինում	19197
43	Շարժիչի կափարիչի միջադիրի փոխարինում	2880
44	Թափանցիկ հանում և տեղադրում կամ փոխարինում	800
45	Թափանցիկ առանցքակալի փոխարինում	400
46	Շարժիչի կափարիչի փոխարինում	400
47	Շարժիչի կափարիչի միջադիրի փոխարինում	960
48	Շարժիչի շարժաթևի փոխարինում 1 հատ	1200
49	Մխոցային օդակների փոխարինում 1 կ-տ	800
50	Շարժիչի բաշխիչ լիսեռի երկրակի փոխարինում	1200
51	Ատամնանցիկ փոխարինում	1200
52	Ատամնանցիկ փոկի փոխարինում	1600
53	Ատամնավոր փոկի պատյանի փոխարինում	1600
54	Սուխարիկ փոխարինում 1կ/տ	2400
55	Շարժիչի հանդարտիչի փոխարինում	5759
56	Շարժիչի փոկի հողովակի փոխարինում	2880
57	Շարժիչի հողովակի առանցքակալի փոխարինում	960
58	Շարժիչի առջևի կափարիչի փոխարինում, հանում, տեղադրում միջադիրի փոխարինումով	5759
59	Շարժիչի յուղի արանքաշափիչի (ՅՃԻ) իրանի փոխարինում	1200
60	Շարժիչի փոկի ձգիչի փոխարինում	3839
61	Շարժիչի փոկի ձգիչի նորոգում	3999
62	Շարժիչի զամասեղի փոխարինում	800
63	Շարժիչի զամասեղի փոխարինում բնիկի նորոգումով	800
64	Գլխիկի հեղույսի փոխարինում	800
65	Ծնկածև լիսեռի հեղույսի փոխարինում	800
66	Շարժիչի էլեկտրական համակարգի հանում տեղադրում	960
67	Շարժիչի վառելիքի սնման համակարգի հանում տեղադրում	6479
68	Շարժիչի բիմիական լվացում 1 կտոր	2000
69	Շարժիչի բիմիական լվացում ընդհանուր	4799
70	Բաշխիչ լիսեռի նորոգում /վրանի տեղադրում/	800
71	Ծնկածև լիսեռի կարգավորող տափաղակի տեղի նորոգում	800
72	Կափյուրների իղկում 1 հատ	800
73	Կափյուրի բնիկի նորոգում /զնեզր/	2400
74	Պարագիտ լիսեռի իղկում և վրանի տեղադրում	2000
2.Ղեկավարման, սնման և յուղման համակարգ		0
75	Յուղի և յուղի գտիչի փոխարինում	960
76	Ավտոմեքենայի հանգույցների յուղում	400
77	Համակարգչային ախտորոշում	3999
78	Յուղի ռադիատորի փոխարինում	2880
79	Յուղի ռադիատորի նորոգում	960
80	Շարժիչի կոլեկտորի փոխարինում	800
81	Շարժիչի կոլեկտորի միջադիրի փոխարինում	4799
82	Վառոցքի մոմի փոխարինում 1 կ-տ	2400
83	Վառելիքի նորոգ մաքրման գտիչի փոխարինում	1920
84	Օղի գտիչի փոխարինում	960
85	Օղի ծախսաչափիչի հանում և տեղադրում կամ փոխարինում	2880

1	2	3
86	Օղի ծախսաչափիչի ռետինե խողովակի հանում և տեղադրում կամ փոխարինում	3280
87	Օղի գոծիչի փողրակի հանում և տեղադրում	960
88	Ինժեկտորի բոցամուղերի փոխարինում	2480
89	Ինժեկտորի բոցամուղերի մաքրում	14398
90	Ինժեկտորի բոցամուղի խտաբուկերի փոխարինում	960
91	Բենզամոդիլի փոխարինում	7679
92	Վառելիքի կոշտ մաքրման գոծիչի փոխարինում	960
93	Վառելանյութի խողովակի հանում և տեղադրում կամ փոխարինում	960
94	Բոնկման կարգավորում	960
95	Ղեկավարման բլոկի հանում և տեղադրում կամ փոխարինում	4799
96	Վառելիքի բաքի հանում և տեղադրում կամ փոխարինում	960
97	Վառելիքի բաքի մաքրում	1200
98	Օղի ծախսի տվիչի փոխարինում	2880
99	Ջրի ջերմաստիճանի տվիչի փոխարինում	2880
100	Ջրի խողովակի, փողրակի փոխարինում	2880
101	Բենզոբաքի բենզամոդիլի ցանցի փոխարինում	800
102	Բենզոբաքի բենզամոդիլի ցանցի մաքրում	800
103	Յուղի ճնշման տվիչի փոխարինում	2880
104	Տվիչի փոխարինում	2880
105	Օդազտիչի իրանի փոխարինում	1600
106	Էլ.բենզամոդիլի կախոցի փոխարինում	880
3. Մառնեցման և արտածման համակարգ		0
107	Հովհարի փոխարինում	4799
108	Հովհարի փոկի հանում և տեղադրում կամ փոխարինում	2800
109	Ռադիատորի հանում և տեղադրում կամ փոխարինում	11198
110	Ռադիատորի մոդուլ	38394
111	Շերտավեղկի փոխարինում	2800
112	Շերտավեղկի կառավարման ձգաձողի փոխարինում	1200
113	Ընդարձակող բաքի փոխարինում	960
114	Ընդարձակող բաքի փողրակի փոխարինում	1920
115	Ջրի ծորակի փոխարինում	800
116	Հովհարի համակարգի ռետինե փողրակի փոխարինում	2880
117	Հովհարի շարժիչի հանում և տեղադրում կամ փոխարինում	960
118	Վառարանի ռադիատորի փոխարինում, բոլոր աշխատանքները ընդգրկված	14398
119	Վառարանի ռադիատորի նորոգում	7679
120	Վառարանի շարժիչի փոխարինում	800
121	Ջնոուցիչի էլ.ծորակի փոխարինում	800
122	Ջնոուցիչի անջատիչի սլյատայի նորոգում	800
123	Ջնոուցիչի անջատիչի սլյատայի փոխարինում	800
124	Ջնոուցիչի իրանի փոխարինում	800
125	Թերմոստատի փոխարինում	11518
126	Ջրի մղիչի փոխարինում միջադիրով	19197
127	Ջրի մղիչի միջադիրի փոխարինում	800
128	Գենեբատորի փոկի փոխարինում	3839
129	Գենեբատորի փոկի ձգող խողովակի փոխարինում	3839
130	Ջրի ռադիատորի վերանորոգում	6399
131	Թերմոստատի միջադիրի փոխարինում	2800
132	Խլարարի հանում և տեղադրում կամ փոխարինում	960
133	Խլարարի I հատ խողովակի փոխարինում	960

1	2	3
134	Խյարարի անուրի (xamyT) փոխարինում	960
135	Խյարարի ներդիրի փոխարինում	1920
136	Խյարարի կախոցի փոխարինում	960
137	Հովացման հեղուկի փոխարինում	3839
138	Դիֆուզորի փոխարինում	800
139	Կոնդիցիոների լիցքավորում	2400
140	Կոնդիցիոների յուղի ավելացում	960
141	Կոնդիցիոների կոմպրեսորի համում և տեղադրում	4799
142	Կոնդիցիոների ռադիատորի փողրակի համում և տեղադրում	1920
143	Կոնդիցիոների առանցքակալի համում և տեղադրում	3839
144	Կոնդիցիոների ռադիատորի համում և տեղադրում	7679
145	Կոնդիցիոների կալունակի համում և տեղադրում	3200
4. Կցորդում և ՓՏ		0
146	ԱՓՏ-ի հիմնական նորոգում, ներառյալ բոլոր աշխատանքները	57592
147	ԱՓՏ-ի հավաքածույի փոխարինում	960
148	ԱՓՏ-ի փոխարինում	4799
149	ԱՓՏ-ի ստամնանիվի փոխարինում	960
150	ԱՓՏ-ի կոմվերտերի համում և տեղադրում կամ փոխարինում	7679
151	ԱՓՏ-ի տանող սկավառակի փոխարինում	7679
152	ԱՓՏ-ի կցորդման գլխավոր գլանի կալունակի փոխարինում	3280
153	ԱՓՏ-ի սոլենոիդների փոխարինում	9599
154	ԱՓՏ-ի համակարգչի և սոլենոիդների փոխարինում	9599
155	ԱՓՏ-ի յուղի մղիչի փոխարինում	3839
156	ԱՓՏ-ի յուղի մղիչի խտաբուկերի փոխարինում	3839
157	ԱՓՏ-ի ռադիատորի նորոգում	800
158	ԱՓՏ-ի ռադիատորի փոխարինում	960
159	ԱՓՏ-ի հիդրոազույցի փոխարինում	960
160	ԱՓՏ-ի հիդրոազույցի փոխարինում հաևած ԱՓՏ-ի դեպքում	4799
161	ԱՓՏ-ի յուղի գտիչի փոխարինում	960
162	ԱՓՏ-ի յուղի փոխարինում	9599
163	ԱՓՏ-ի գտիչի լվացում, մաքրում՝ քարտերի համում և տեղադրումով	7999
5. Բաշխիչ տուփ, կարդանային լիսեռ		0
164	Կարդանային լիսեռի համում և տեղադրում կամ փոխարինում	9599
165	Կարդանային լիսեռի խաչուկի փոխարինում	4799
166	Բաշխիչ տուփի կալունակի համում և տեղադրում կամ փոխարինում	960
167	Բաշխիչ լիսեռի ստամնանիվի փոխարինում	1680
168	Կարդանային լիսեռի միջ. կախոցի համում և տեղադրում կամ փոխարինում	960
169	Կարդանի հեղույսի փոխարինում	800
170	ԲՏ-ի էլուստի փոխարինում /Ֆլանեզ/	960
171	ԲՏ-ի արգելակման թմբուկի փոխարինում	800
172	ԲՏ-ի արգելակման թմբուկի կոճղակների փոխարինում	800
173	ԲՏ-ի արգելակման թմբուկի կոճղակների կարգավորում	800
174	ԲՏ-ի արգելակման աշխատանքային գլանի փոխարինում	800
6. Առջևի և հետևի կամրջակներ		0
175	Հետևի կամրջակի համում և տեղադրում կամ փոխարինում	7679
176	Հետևի կամրջակի լիկատար քանդում, արատավորում և հավաքում	960
177	Հետևի կամրջակի կիսաստնու համում և տեղադրում կամ փոխարինում	800
178	Հետևի կամրջակի կիսաստնու առանցքակալի փոխարինում	800
179	Հետևի կամրջակի կիսաստնու առանցքակալի խտաբուկերի փոխարինում	960

1	2	3
180	Հետևի կամրջակի բուճացքի գնդածև հեմարանի հանում և տեղադրում կամ փոխարինում	800
181	Հետևի կամրջակի դիֆերենցիալի փոխարինում	1920
182	Հետևի կամրջակի բյուկափորման համակարգի նորոգում	960
183	Կամրջակի տվիչի փոխարինում	1920
184	Առջևի կիսաստոնիները միացնող ազուլյցի փոխարինում	880
185	Առջևի կամրջակի շրջադարձի բուճացքի փոխարինում	880
186	Առջևի կամրջակի շրջադարձի գնդածև հեմակի փոխարինում	880
187	Տանող կցաշուրքի փոխարինում	880
188	Մատելիտների հավարման իրանի և տնի փոխարինում	800
7. Կախոց		0
189	Տրավերսի հանում և տեղադրում կամ փոխարինում	5599
190	Չախ կամ աջ հողակապի հանում և տեղադրում կամ փոխարինում	7999
191	Առջևի անվակուոնի առանցքակալի փոխարինում	7999
192	Առջևի անվակուոնի հանում և տեղադրում կամ փոխարինում	4799
193	Հետևի անվակուոնի հանում և տեղադրում կամ փոխարինում	4799
194	Հետևի անվակուոնի առանցքակալի փոխարինում	9599
195	Անվակուոնի զանաանդի և հեղուսի փոխարինում(մեկ անիվի համար)	800
196	Չախ կամ աջ հողակապի խտաբուկների փոխարինում	960
197	Չախ կամ աջ հողակապի նորոգում	2480
198	Չախ կամ աջ հողակապի փոշերիկնոցի փոխարինում	1920
199	Յնցամեղմիչի քասակի փոխարինում	1920
200	Առջևի զսպանակի փոխարինում	960
201	Առջևի ցնցամեղմիչի հանում և տեղադրում կամ փոխարինում	9599
202	Հարվածամեղմիչի վռանների փոխարինում	2000
203	Մեղմիչի ամրացման կալունակի փոխարինում	800
204	Մեղմիչի երկաթե համաձուլվածքով վռանի փոխարինում	800
205	Ներքևի լծակի հանում և տեղադրում կամ փոխարինում	7999
206	Ներքևի լծակի վռանների փոխարինում I հատ	3839
207	Ներքևի լծակի հեղուսի փոխարինում	1680
208	Հարվածիչի (բարձիկի փոխարինում)	960
209	Վերևի լծակի հանում և տեղադրում կամ փոխարինում	9599
210	Վերևի լծակի վռանների փոխարինում I հատ	3839
211	Վերևի լծակի հեղուսի փոխարինում	960
212	Հետևի վերևի լծակի վռանի փոխարինում I հատ	7679
213	Գնդե հողակապերի սլատյանի փոխարինում	1680
214	Գնդե հողակապերի փոխարինում	3839
215	Կալունարարի հանում և տեղադրում կամ փոխարինում	1920
216	Առջևի կալունարարի վռանների փոխարինում	3839
217	Հետևի կախոցի անվարացքի կարգավորում	1200
218	Հետևի կալունարարի վռանների փոխարինում	3839
219	Կալունարարի կալունակի փոխարինում	1920
220	Հետևի զսպանակների փոխարինում	960
221	Հետևի ձգածողի հանում և տեղադրում կամ փոխարինում	3839
222	Հետևի անկյունագծային լծակի հանում և տեղադրում կամ փոխարինում	7679
223	Չսպանի փոխարինում	2400
224	Չսպանի վռանների փոխարինում I հատ	2000
225	Հետևի ցնցամեղմիչի փոխարինում	7679
226	Հետևի հարվածամեղմիչի վռանների փոխարինում	2000
227	Անկյունագծային լծակի վռանների փոխարինում I հատ	2880

1	2	3
228	Անվակունդի դարձովի կանգնակի փոխարինում	800
229	Աջ կամ ձախ դարձկեն լծակի փոխարինում	1200
230	Զարակի մետաղական վռանների փոխարինում	1200
231	Անվակունդի առանցքակալների բացակի կարգավորում	960
8. Ղեկային մեխանիզմ		0
232	Ղեկասյունակի(ժեթիթն) հիմնական նորոգում,	41594
233	Ղեկասյունակի(ժեթիթն) արտրիկի փոխարինում	7679
234	Ղեկասյունակի (ժեթիթն) առանցքային ստնու փոխարինում	5599
235	Ղեկասյունակի(ժեթիթն) խաչուկների փոխարինում	11518
236	Ղեկասյունակի(ժեթիթն) վերանորոգման հավաքածույի փոխարինում	7279
237	Ղեկասյունակի(ժեթիթն) քանդում, արատավորում, հավաքում	28796
238	Ղեկային մեխանիզմի ազդանշանի փոխարինում	2880
239	Ղեկասյունակի սլատյանի փոխարինում	1920
240	Ղեկային մեխանիզմի փականքի փոխարինում	880
241	Ղեկային մեխանիզմի ղեկասյունակի ամրացման անուրի փոխարինում	800
242	Ղեկային ձողի առանցքակալի փոխարինում	1680
243	Ղեկային կալունի ձգանների փոխարինում	1680
244	Ղեկային կալունի միջին ձգանի փոխարինում	2400
245	ՂԿ-ի առանցքակալի կամ վռանների փոխարինում	2480
246	ՂԿ-ի հողակալների համում և տեղադրում կամ փոխարինում	28796
247	Հիդրոուժեղարարի մոխի փոխարինում	2800
248	Հիդրոուժեղարարի մոխի հիմնական նորոգում, ներստյալ աշխատանքները	23997
249	Հիդրոուժեղարարի փոկի համում և տեղադրում կամ փոխարինում	18397
250	Հիդրոուժեղարարի բարձր ճնշման խողովակի փոխարինում	3999
251	Հիդրոուժեղարարի ցածր ճնշման խողովակի փոխարինում	3999
252	Հիդրոուժեղարարի վերանորոգման հավաքածույի փոխարինում	3999
253	Ղեկային ձգանողի համում և տեղադրում կամ փոխարինում	3839
254	Ղեկային ձողի գնդե հողակալի նորոգում	4799
255	Ղեկային ձգանողի ձգանների համում և տեղադրում կամ փոխարինում	3280
256	Ղեկի համում տեղադրում կամ փոխարինում	1920
257	Ղեկային ձգանողի ծայրակալների փոխարինում	1920
258	Հիդրոուժեղարարի համակարգի յուղի փոխարինում	800
259	ՂԿ ձողի ելուստի փոխարինում /դուրուկ/	1200
260	ՂԿ յուղի փոխարինում	800
261	ՂԿ ձողի տեղաշարժի մեխանիզմի փոխարինում	800
262	Հիդրոուժեղարարի յուղի տարայի փոխարինում	2000
263	Հիդրոուժեղ. յուղի տարայի խուփի փոխարինում	1200
264	Արտրիկի և որդնակի առանցքների մեջ բացակների կարգավորում	880
265	Հիդրոուժեղարարի փոկանիվի փոխարինում	1600
266	Աջ կամ ձախ ձգանի կարգավորիչ կցիչի փոխարինում	800
267	ՂԿ ծայրակալի կցիչի փոխարինում	800
9. Արգելակային համակարգ		0
268	Վակումային ուժեղարարի փոխարինում	4799
269	Վակումային ուժեղարարի փականի փոխարինում	2480
270	Վակումային ուժեղարարի նորոգում	4079
271	Գլխ. գլանի համում և տեղադրում կամ փոխարինում	5759
272	Գլխ. գլանի հիմնական նորոգում, բոլոր աշխատանքների ընդգրկումով	960
273	Աշխատանքային գլանի համում և տեղադրում կամ փոխարինում	2400
274	Աշխատանքային գլանի հիմնական նորոգում,	2400

1	2	3
275	Առջևի սուպպորտի համում և տեղադրում կամ փոխարինում	3200
276	Հետևի սուպպորտի համում և տեղադրում կամ փոխարինում	3200
277	Առջևի սուպպորտի վերանորոգում	3839
278	Հետևի սուպպորտի վերանորոգում	3839
279	Արգելակի վթարային արգելահամման լծակի փոխարինում	1680
280	Արգելակի վթարային արգելահամման լծակի նորոգում	2480
281	Արգելակային փողրակի փոխարինում	1920
282	Արգելակային կոճղակների փոխարինում	2400
283	Արգելակային համակարգի օդահամում	960
284	Սկավառակային կոճղակների փոխարինում	3839
285	Առջևի արգելակային սկավառակի փոխարինում	4799
286	Առջևի արգելակային սկավառակների հղկում 1 հատ	4799
287	Հետևի արգելակային սկավառակի փոխարինում	4799
288	Չեօքի արգելակի համում և տեղադրում կամ փոխարինում	4799
289	Չեօքի արգելակային մեխանիզմի վերանորոգում	4799
290	Չեօքի արգելակի ճուղանի համում և տեղադրում կամ փոխարինում	2880
291	Չեօքի արգելակի ճուղանի վերանորոգում	960
292	Հետևի արգելակների կարգավորում	960
293	Արգելակային համակարգի լվացում	2000
294	Արգելակային հեղուկի փոխարինում	1600
10. Էլեկտրասարքավորում		0
295	Գեներատորի համում, տեղադրում կամ փոխարինում	9599
296	Գեներատորի քանդում և արատավորում, հավաքում	30716
297	Գեներատորի ստատորի փոխարինում	960
298	Գեներատորի ռոտորի փոխարինում	960
299	Գեներատորի լիզքավորման ռեյնի փոխարինում	1920
300	Գեներատորի դիտոլային կամ թջակի փոխարինում	1920
301	Գեներատորի առանցքակալի փոխարինում	1920
302	Գեներատորի փոկանիվի փոխարինում	960
303	Մեկնարկիչի քանդում և արատավորում, հավաքում	14398
304	Մեկնարկիչի խարիսխի փոխարինում	1920
305	Մեկնարկիչի իրանի փոխարինում	1680
306	Մեկնարկիչի թոնիչի փոխարինում	1680
307	Մեկնարկիչի բեմոլեքսի փոխարինում	1920
308	Մեկնարկիչի ավտոմատի փոխարինում	1920
309	Մեկնարկիչի ռեյնի փոխարինում	1920
310	Մեկնարկիչի ածուխների փոխարինում	1920
311	Ազդանշանի կարգավորում	960
312	Ազդանշանի համում և տեղադրում կամ փոխարինում	1920
313	Առջևի յապտերի համում և տեղադրում կամ փոխարինում	2880
314	Սարքերի պանելի համում և տեղադրում	20797
315	Հետևի յապտերի համում և տեղադրում կամ փոխարինում	800
316	Առջևի յապտերների կարգավորում	2400
317	Բռնկման կողպեքի համում և տեղադրում	1920
318	Վառոցքի կոճի համում և տեղադրում	1760
319	Ինդուկցիոն կոճի համում և տեղադրում	1600
320	Վազքաշափի փոխարինում	2000
321	Վազքաշափի ճուղանի համում և տեղադրում կամ փոխարինում	1760
322	Չափիչ սարքերի համում և տեղադրում	9599
323	Ապակեվազիչի համում և տեղադրում կամ փոխարինում	2880

1	2	3
324	Ապակեվացիչի շարժիչի հանում և տեղադրում կամ փոխարինում	960
325	Ապահովիչների փոխարինում	400
326	Ապակեամբարձիչների փոխարինում	4799
327	Ապակեամբարձիչների շարժիչի փոխարինում	1680
328	Էլեկտրական տվիչների փոխարինում	2880
329	Տվիչի փոխարինում	2800
330	Էլեկտրական անջատիչների փոխարինում	960
331	Մարտկոցի փոխարինում	800
332	Մարտկոցի կլեյմաների փոխարինում	800
333	Ակումյատորի դրական էլեկտրոլարի փոխարինում	1200
334	Ակումյատորի բացասական էլեկտրոլարի փոխարինում	1200
335	Ավտոմեքենայի ալեհավաքի փոխարինում	800
336	Ավտոմեքենայի ալեհավաքի նորոգում	960
337	Էլ/ կոճակի փոխարինում	960
338	Էլեկտրական շտեյկերի փոխարինում	1120
339	Ջրի ցողիչի փոխարինում	2400
340	Գեներատորի յակրի փոխարինում	1680
341	Գեներատորի կոաշտեինի փոխարինում	1680
342	Գեներ. դինոսցի կամ հետևի իրանի փոխար.	1680
343	Մեկնարկիչի առջևի իրանի փոխարինում	880
344	Լորի փոխարինում	2880
345	Ցուցիչի փոխարինում	800
346	Պրիջորի լամպի փոխարինում	2880
347	Հետևի լամպերի պանելի փոխարինում	960
348	Էլ.լարերի վերանորոգում	960
11. Ավտոմեքենայի սրահ		0
349	Արտաքին հայելիների տեղադրում կամ փոխարինում	1920
350	Նստարանի հանում տեղադրում կամ փոխարինում	2880
351	Նստատեղի վերանորոգում	4799
352	Սրահի պաստառապատում	960
353	Սրահի ձայնամեկուսացում	960
354	Ապակիների մզեցում / կտոր	4799
355	Դռան փականի փոխարինում	960
356	Բեռնախցիկի ճուղանի փոխարինում	960
357	Դռան դրսի բռնակի փոխարինում	960
358	Դռան ներսի բռնակի փոխարինում	960
359	Դռների ռետինների փոխարինում	1920
360	Դռների ապակիների ռետինների փոխարինում	960
361	Դռան սրստառի փոխարինում	5599
362	Լամպի փոխարինում	800
363	Ամրակներ (կլիպս) փոխարինում Թաս	1200
364	Դինապակու փոխարինում	11998
12. Այլ ծառայություններ		0
365	Ավտոմեքենայի բավարի հղկում և ներկում <i>զին / կտորի համար</i>	23997
366	Ավտոմեքենայի բավարի հղկափայլեցում <i>զին / կտորի համար</i>	7999
367	Եռակգնամ աշխատանքներ <i>զին / 1սմ (զծ.մ) համար</i>	1440
368	Խառատային աշխատանքներ <i>զին / կտորի համար</i>	960
369	Փակամագործական աշխատանքներ <i>զին / ժամ աշխատանքի համար</i>	960
370	Ավտոմեքենայի լվացում	3839
371	Ավտոմեքենայի շարժիչի լվացում	10399

1	2	3
372	Առջևի կամ հետևի անվարացքի կարգավորում	6399
373	Անիվի համում և տեղադրում	960
374	Անվաղողի վերանորոգում	960
375	Անվաղողի փոխարինում համում տեղադրումով	960
376	Անիվի քալանսավորում	480
377	Անիվի վալց	4799
378	Ավտոմեքենայի սրահի չոր քիմ մաքրում	23997
379	Քարշարկի ծառայություն <i>գին 1կմ, համար</i>	672
380	Ավտոմեքենայի հագոցի փոխարինում	2480
381	Ավտոմեքենայի հագոցատակի փոխարինում	1680
382	Ավտոմեքենայի կողային ապակու փոխարինում	2880
383	Ավտոմեքենայի հետևի ապակու փոխարինում	2880
384	Ավտոմեքենայի հետևի կողային ապակու փոխարինում	1920
385	Ավտոմեքենայի դռան փոխարինում	3839
386	Բամպերի փոխարինում	5759
387	Բամպերի կայունակի փոխարինում	2400
388	Բամպերի քալկայի փոխարինում	3280
389	Բեռնախցիկի փոխարինում	2880
390	Բեռնախցիկի փականի փոխարինում	960
391	Բեռնախցիկի ռետինի փոխարինում	800
392	Դռան պաստառի փոխարինում	800
393	Հագոցի փականի փոխարինում	3999
394	Ավտոմեքենայի հագոցի պետլի փոխարինում	3200
395	Բեռնախցիկի զսպանի փոխարինում	800
396	Բեռնախցիկի մեղմիչի փոխարինում	960
	Ընդամենը ծառայություն	1,738,501

Ընթացիկ միջին և հիմնական նորոգման ընթացքում

1.Շարժիչ

1	Շարժիչի բլոկ	16798
2	Շարժիչի գլխիկ	11998
3	Բարձիկ	12798
4	Շարժիչի գլխիկի միջադիր	19997
5	Շարժիչի միջադիրների կոնսոլեկտ	11198
6	Շարժիչի փական դուրս մղող	4799
7	Շարժիչի փական ներս մղող	5599
8	Շարժիչի փականի խտաբուկ	1120
9	Փականի զսպանակ	800
10	Ճնկած րիսեռ	800
11	Ճնկած րիսեռի խտաբուկ առջևի	7199
12	Ճնկած րիսեռի խտաբուկ հետևի	10399
13	Ճնկած րիսեռի արմատական ներդիրներ	25596
14	Ճնկած րիսեռի շարժաբևային ներդիրներ	27196
15	Մխոց	6399
16	Մխոցային օղակներ	38394
17	Մխոցային մատ	1680
18	Ատամնանիվ	2800
19	Ատամնավոր վտկ	3200
20	Շարժիչի կափույր	800
21	Շարժիչի կափույրի կափարիչ	1200
22	Շարժիչի շրթա	24796

1	2	3
23	Շարժիչի սրաշտուպանիչ	3999
24	Փոկի ձգիչ	1600
25	Հիդրոձգան	14398
26	Հրիչ	800
27	Շարժիչի հիդրոնորիչ	3200
28	Շարժիչի կալուն	3599
29	Շարժիչի համոդարտիչ	9599
30	Շարժիչի հոլովակ	800
31	Շարժիչի հոլովակի առանցքակալ	7199
32	Շարժիչի առջևի կափարիչ	880
33	Շարժիչի վերևի կափարիչ	800
34	Շարժիչի վերևի կափարիչի միջադիր	9599
35	Թափանիվ	6399
36	Շարժաքև	3999
37	Ատամնանիվ բաշխիչ լիսեռի	5599
38	Ատամնանիվ ծնկածև լիսեռի	3999
39	Փոկանիվ ծնկածև լիսեռի	800
40	Փոկանիվ	800
41	Սուխարիկ փականի	400
42	Գլխիկի բոլտ	400
43	Ծնկածև լիսեռի բոլտ	400
44	Պարկուճ (ձեթնոց)	800
45	Քարտեր	16798
46	Շարժիչի ատամնավոր փոկ	3200
47	Պատյան ատամնավոր փոկի	4799
48	Փական յուղի տարայի	1200
49	Խուփ ընդարձակման քարի	1360
50	Խուփ շարժիչի	7199
51	Թաքիկ յուղի մղիչի	2000
52	Բարձիկ փ/տուփի	18397
53	Յուղի մղիչ	4799
54	Միջադիր յուղի մղիչի	3999
55	Յուղի ծորակ	800
56	Շարժիչի յուղի արանքաչափիչ	800
57	Շարժիչի յուղի արանքաչափիչի իրան	800
58	Կափույրի միջադիր	2400
59	Քարտերի միջադիր	3200
60	Շարժիչի բաշխիչ լիսեռ	800
61	Բ/լիսեռի կափարիչ	800
62	Ջրի շապիկի խցուկ /զագլուշկա/	1200
63	Թափանիվի առանցքակալ	800
64	Վեճեց	4799
65	Շարժիչի կափարիչ /սլյուժինն 31 105/	2800
66	Յուղի ուղիատորի փողրակ	800
2. Ղեկավարման, սնման և յուղման համակարգ		0
67	Յուղ շարժիչի հանքային, 1 լիտր	2000
68	Յուղ շարժիչի կիսասինթետիկ, 1 լիտր	2560
69	Յուղ շարժիչի սինթետիկ, 1 լիտր	3200
70	Յուղման համակարգի լվացման հեղուկ 1 լիտր	1440
71	Յուղի գոլիչ	1600

1	2	3
72	Յուղի ռադիատոր	2400
73	Վառոցքի կոճ	19997
74	Արտածման կալեկտոր աջ	4079
75	Արտածման կալեկտոր ձախ	2480
76	Ներածման կալեկտոր աջ	800
77	Ներածման կալեկտոր ձախ	800
78	Արտածման կալեկտորի աջ միջադիր	3200
79	Արտածման կալեկտորի ձախ միջադիր	3200
80	Ներածման կալեկտորի աջ միջադիր	3200
81	Ներածման կալեկտորի ձախ միջադիր	3200
82	Վառոցքի մոճ	2000
83	Բենզոլրաքի բենզոմոլիչի ցանց	800
84	Բենզոմոլիչ	23197
85	Բենզոլրաք	23997
86	Ինժեկտորի բոցամուղ բենզինով շարժիչի	11998
87	Բոցամուղի խտաբուկ	800
88	Վառելանյութի մոլիչ էլեկտրական	10399
89	Վառելանյութի գոլիչ նուրբ մաքրման	6399
90	Վառելիքի կոչու մաքրման գոլիչ	3999
91	Վառելանյութի խողովակ	2400
92	Օդի գոլիչ	2400
93	Օդի ծախսաչափիչ	24796
94	Օդի գոլիչի փողրակ	3200
95	Ջերմաստիճանային տվիչ	6399
96	Յուղի տվիչ	7199
97	Բաշխիչ լիսեռի տվիչ	14398
98	Օդի ծախսի տվիչ	3999
99	Արագաչափի տվիչ	6399
100	Հովհարի տվիչ	3599
101	Ջրի խողովակ երկար	3200
102	Ջրի խողովակ կարճ	2400
103	Ջրի տվիչ	9599
104	Բենզոլրաքի տվիչ	10399
105	Մարման ընթացքի կարգավորիչ	6399
106	Ղևկավարման համակարգիչ	3200
107	Պարապ ընթացքի տվիչ	3999
108	Թքվածնի տվիչ	5599
109	Բենզամոլիչի վերանորոգման հավաքածու	4799
110	Վառելիքի գոլիչ /փոքր/	2400
111	Ակսիլյատոր	3200
112	Ակսիլյատորի ճուպան	800
113	Օդագոլիչի իրան	2000
114	Էլեկտրական բենզամոլիչի կախոց	2400
115	Լվանալու հեղուկ /նոյ/ 0,5լ	800
116	Մաքրելու հեղուկ ABRO	2400
3. Մառնցման և արտածման համակարգ		0
117	Հովհար	5599
118	Հովհարի շարժիչ	11998
119	Հովհարի քլանիս	3999
120	Ռադիատոր	37595

1	2	3
121	Ընդարձակող բարի փական	1600
122	Ընդարձակող բարի փողրակ	3200
123	Ընդարձակող բար	800
124	Ռադիաստորի փողրակ ներքևի	800
125	Ռադիաստորի փողրակ վերևի	800
126	Թերմոստատ	11198
127	Ջրի մղիչ	23997
128	Ջրի մղիչի միջադիր	4799
129	Ջրի պոմպի խտարուկ	3200
130	Ջրի պոմպի առանցքակալ	2000
131	Ջրի պոմպի թևակ	2400
132	Սառեցման հեղուկ / լիտր	1600
133	Չսառչող հեղուկ ապակիների համար	2400
134	Չզիչ հողովակի	15198
135	Փոկ մեծ	15998
136	Հովացման համակարգի ռետինե խողովակ	800
137	Ծորակ	560
138	Փոկանյւլ գեներատորի փոկի	2400
139	Միջադիր թերմոստատի	1200
140	Խլարարի ներդիր	800
141	Խլարարի կախոց	800
142	Խլարարի խողովակ	800
143	Կրոնշտեյն	400
144	Խլարարի անոթ (Խամուտ)	400
145	Խլարար	1200
146	Շարժիչ վառարանի	3999
147	Վառարանի ռադիատոր	15998
148	Չզիչ հողովակի հեղույս	800
149	Շերտափեղկի ճոպան	800
150	Շերտափեղկ	1200
151	Ռադիաստորի դիֆուզոր պլաստմասե	3200
152	Ռադիաստորի դիֆուզոր երկաթե	7199
153	Էլեկտրական հովհարի իրան	3999
154	Ջնուցիչի ռադիատորի էլեկտրա. փական	1600
155	Կոնդիցիոների կոմպրեսոր	800
156	Կոնդիցիոների ռադիատորի փողրակ	400
157	Առանցքակալ կոնդիցիոների	3999
158	Կոնդիցիոների ռադիատոր	1600
159	Կոնդիցիոների յուղ 1 լ	800
160	Կոնդիցիոների կայունակ	400
4. Կցորդում և ՓՏ		0
161	Հերմետիկ	2400
162	Ավտոմատ փոխանցման տուփ	35995
163	ԱՓՏ յուղ / լիտր	5599
164	ԱՓՏ-ի պատյան	800
165	ԱՓՏ-ի կոնվերտ	6399
166	ԱՓՏ-ի յուղի գտիչ	6399
167	ԱՓՏ-ի սղննոխիղ	9599
168	ԱՓՏ-ի սկավառակների հավաքածու	7999
169	ԱՓՏ-ի վերանորոգման կոմպլեկտ	9599

1	2	3
170	Ատամնանիվ ԱՓՏ-ի	800
171	Յուղի մղիչ խցուկ ԱՓՏ-ի	3200
172	Յուղի մղիչ ԱՓՏ-ի	2400
5. Բաշխիչ տուփ, կարդանային լիսեռ		0
173	Բաշխիչ տուփ	3200
174	Բաշխիչ տուփի խցուկ	6399
175	Բաշխիչ տուփի առանցքակալ	4799
176	Բաշխիչ տուփի ատամնանիվ	800
177	Բաշխիչ տուփի լիսեռ	1600
178	Բաշխիչ տուփի իրան	1200
179	Բաշխիչ տուփի երկժամի	2000
180	Բաշխիչ տուփի փոխանցման մեխանիզմ	2400
181	Բաշխիչ տուփի բարձիկ	4799
182	Բաշխիչ տուփի տանող ատամնանիվ	2400
183	Պատագիտ վալ	3200
184	Բաշխիչ տուփի ելուստ	3200
185	Բաշխիչ տուփի շուղ 1 լիտր	4799
186	Կարգանի հեղույս, մանեկ 1 հատ	1600
187	Կարգավորող ներդրակներ	1200
188	Կցաշորք	1600
189	Կցաշորքի կեղտապաշտպանիչ	1200
190	Կխաբացնող վուսն	2000
191	Բաշխիչ տուփի ձեռքի արգելակի քմբուկ	2400
192	Բաշխիչ տուփի ձեռքի արգելակի քմբուկային կոնդակներ	4799
193	Բաշխիչ տուփի արգելակման վահանակ	800
194	Բաշխիչ տուփի ձեռքի արգելակի աշխատանքային զլան	2000
195	Բաշխիչ տուփի ատամնանիվների բացակներ կարգավորող տափողակ	1200
196	Բաշխիչ տուփի ցածր փոխանցման մեխանիզմ	3599
197	Բաշխիչ տուփի բարձր փոխանցման մեխանիզմ	4399
198	Հնմակային տափողակներ	1200
199	Կարդանային լիսեռ	800
200	Էլաստիկ մուֆտ	1600
201	Կարդանային լիսեռի միջանկյալ հենակ	2800
202	Կարդանային լիսեռի խաչուկ	11998
6. Առջևի և հետևի կամրջակներ		0
203	Չետևի կամ առջևի կամրջակ	43994
204	Ռեդուկտոր	1600
205	Գլխավոր փոխանցման ատամնանիվների կոմպլեկտ	1600
206	Դիֆֆերենցիալ	23997
207	Դիֆֆերենցիալի սատելլիտ	11198
208	Տանող ատամնանիվի խցուկ	3999
209	Տանող ատամնանիվի առանցքակալ	800
210	Դիֆֆերենցիալի առանցքակալ	3999
211	Չախ կամ աջ կիսաստնու փոշեթիկնոց	3200
212	Կիսաստնի	800
213	Կիսաստնու առանցքակալ	2000
214	Կիսաստնու միջադիր	800
215	Կիսաստնու խցուկ	4799
216	Կարգավորիչ տափողակ	3999
217	Առջևի կիսաստնիները միացնող ազույց	2800

1	2	3
267	Քուսյուղ Շուու 0.5 կգ	1200
268	Գնդե հողակապի կեղտապաշտպան ծածկոց սիլիկոնե	2000
269	Պահպանիչ խուփ	2400
8. Ղեկային մեխանիզմ		0
270	Ղեկային կալուն	19197
271	Ղեկային կալունի առանցքակալ	3999
272	Ղեկային կալունի վերանորոգման կոմպլեկտ	9599
273	Ղեկային կալունի խաչուկ	13598
274	Հիդրոուժեղարարի փոկ	4799
275	Հիդրոուժեղարարի պոմպ	17597
276	Հիդրոուժեղարարի պոմպի վերանորոգման կոմպլեկտ	11998
277	Չզան մեջտեղի	3999
278	Ղեկային ձող	5199
279	Ղեկային ձողի ծայրակալ կ-տ	8799
280	Աջ կամ ձախ ձզան	10399
281	Հիդրոուժեղարարի յուղ, <i>1 լիտր</i>	2000
9. Արգելակային համակարգ		0
282	Գլխ. գլան	9599
283	Գլխ. գլանի վերանորոգման կոմպլեկտ	7999
284	Վակուումային ուժեղարար	800
285	Բանվ. գլան	2400
286	Բանվ. գլանի վերանորոգման կոմպլեկտ	7199
287	Արգելակային փողրակ	11198
288	Սուպպորտ	15198
289	Արգելակային հեղուկ	2400
290	Առջևի արգելակային կոճղակների կոմպլեկտ	15198
291	Հետևի արգելակային կոճղակների կոմպլեկտ	13598
292	Առջևի արգելակային սկավառակ	28796
293	Հետևի արգելակային սկավառակ	26396
294	Չեռքի արգելակի ճոպան	5599
295	Չեռքի արգելակի լծակ	800
10. Էլեկտրասարքավորում		0
296	Գեներատոր	14398
297	Գեներատորի դիոդային կամրջակ	7199
298	Գեներատորի ռեկե	5599
299	Գեներատորի առանցքակալ	3999
300	Գեներատորի խարխախ	4799
301	Գեներատորի խարխախի հետևի պլաստմաս	1680
302	Գեներատորի առջևի իրան	1680
303	Գեներատորի ետևի իրան	1680
304	Գեներատորի վարույթ	4799
305	Գեներատորի փոկանիվ	2400
306	Գեներատորի կալունակ	800
307	Գեներատորի կոլեկտոր	1200
308	Ստարտեր	7999
309	Ստարտերի ռեկե	7199
310	Ստարտերի աճուխ	6399
311	Մեմարկիչի առջևի իրան	2400
312	Մեմարկիչի ետևի իրան	2400
313	Մեմարկիչի բյունգապատ վռաններ	3599

1	2	3
314	Մենարկիչի խարխախ	6399
315	Մենարկիչի խարխախի հետևի սլլաստմաս	3280
316	Մենարկիչի մագնիս	1600
317	Մենարկիչի բարիկ	1200
318	Քենդեքս	5599
319	Ստարտերի կցորդիչ (ավտոմատ)	8799
320	Առջևի լապտեր	43994
321	Հետևի լապտեր	35995
322	Հակամշուշային լապտեր	11998
323	Առջևի թարթիչ	3999
324	Հետևի թարթիչ	3999
325	Արգելակային լապտեր	27996
326	Խցիկի լապտեր	1600
327	Խցիկի լապտերի լամպ	800
328	Արգելակային լապտերի լամպ	800
329	Առջևի թարթիչ լապտերի լամպ	800
330	Հետևի թարթիչի լապտերի լամպ	800
331	Հետևի լապտերի լամպ	1200
332	Հակամշուշային լապտերի լամպ	1200
333	Արգելակային լապտերի լամպ	400
334	Առջևի լապտերի լամպ	400
335	Էլեկտրական անջատիչ	2400
336	Էլեկտրական տվիչ	3999
337	Տախտմետր	2400
338	Ապակեմաքրիչ	2400
339	Բռնկման կողպեք	1600
340	Էլեկտրալարերի գլխավոր խուրց	5599
341	Էլեկտրալարերի երկրորդային խուրց	3999
342	Վառոցքային լարերի խուրց	6399
343	Վառոցքի մոմի ծայրակալ	2400
344	Դռան կողպեք	2400
345	Ազդանշան	27996
346	Ապակեվաղցիչի բաշոկ	3999
347	Ապակեվաղցիչի շարժիչ	11998
348	Յուցիչ սրիքոր	800
349	Անպերմետրի ցուցիչ	800
350	Վառելիքի ցուցիչ	800
351	Ջրի ցուցիչ	800
352	Յուղի ճնշման ցուցիչ	800
353	Վառելիքի բաքի չափիչ	2400
354	Լոք	800
355	Բարից դուրս եկող գազերի տվիչ	880
356	Օդի ծախսի տվիչի ռետինե խողովակ	800
357	Վառարանի ջրի մղիչ էլեկտրական	1600
358	Էլեկտրաամբարձիչների անջատիչների բլոկ	800
359	Դռների կենտրոնական փական	1600
360	Հայելի կողային	7999
361	Ազդանշանային համակարգ	11998
362	Դռան ապակու ամբարձիչ	6399
363	Դռան ապակու էլեկտրաամբարձիչի շարժիչ	11998

1	2	3
364	Ներկ, լուծիչ, օժանդակ նյութեր 1 կտորի վերանորոգման համար	2800
	Թափք	0
365	Հագոց	27996
366	Հագոցի ճուպան	6399
367	Բեռնախցիկի ծածկոց	17597
368	Դուռ	19997
369	Դուռն ներսի բռնակ	2400
370	Դուռն դրսի բռնակ	1600
371	Առջևի բամպեր	19997
372	Հետևի բամպեր	19997
373	Բեռնախցիկի կողպեք	2400
374	Հագոցի պետլի	800
375	Բեռնախցիկի զսպան	800
376	Բեռնախցիկի մեղմիչ	6399
377	Լանժերո	800
378	Պաշտպանիչ	3999
379	Արկա ներսի	3200
380	Արկա դրսի	3599
381	Գորգիկ կ-տ	15998
382	Չարքուկ	15998
383	Բամպերի կայունակ	800
384	Բամպերի բալկա	800
385	Դուռն ռեզին կ-տ	1600
386	Բեռնախցիկի ռեզին	800
387	Դիմապակու ռեզին	3999
388	Դիմապակի	31995
389	Դռների ապակիների ռեզին	3999
390	Դուռն պաստառ կ-տ	800
	Ընդամենը պահեստամասեր	2,369,499
	Ընդամենը	4,108,000

*Ծառայության մատուցման համար սահմանված միավոր առավելագույն գներ հաշվի առնելով պայմանագրի 4.2 կետի պահանջները

ՊԱՏՎԻՐԱՏՈՒ

Վարչապետի աշխատակազմ
 ք.Երևան Հանրապետության հր.
 Կառավարական տուն 1
 ՀՀ ՖՆ գործառնական վարչ.
 ՀՀ 900011022085
 ՀՎՀՀ 02505554



Ծառայություն/
 Կ.Տ

ԿԱՏԱՐՈՂ

«Գարանտերվիս» ՍՊԸ
 ք.Երևան Թբիլիսյան խճ 20

ՀՀ 193004674290
 ՀՎՀՀ 00840437



ԿՃԱՐՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՅՈՒՅՑ*

ՀՀ դրամ

Ծառայության															
հրավերով նախատեսված չափաբաժնի համարը	գնումների պլանով նախատեսված միջանցիկ ծածկագիրը՝ ըստ ԳՄԱ դասակարգման (CPV)	անվանումը	դիմաց առավելագույն վճարումները նախատեսվում է իրականացնել 2020թ-ին՝ ըստ ամիսների, այդ թվում**												
			հունվար	փետրվար	մարտ	ապրիլ	մայիս	հունիս	հուլիս	օգոստոս	սեպտեմբեր	հոկտեմբեր	նոյեմբեր	դեկտեմբեր	Ընդամենը
1	50111130/34	Ավտոմեքենաների վերանորոգման ծառայություն	-	-	-	-	-	-	-	500000	500000	500000	500000	500000	500000

* Կճարման ենթակա գումարները ներկայացվում են ածողական կարգով:
 ** Կճարումները կիրականացվեն փաստացի մագրուցված ծառայությունների դիմաց:

Պ Ա Տ Վ Ի Ր Ա Տ ՈՒ
 Վարչապետի աշխատակազմ
 ք. Երևան, Հանրապետության հր.,
 Կառավարական տուն 1
 ՀՀ ՖՆ գործառնական վարչ.
 ՀՀ 900011022085
 ՀԿՀՀ 02505554

[Ստորագրություն]



(ստորագրություն)

Կ.Տ.

Կ Ա Տ Ա Ր Ո Ղ
 «Գարանտերվիս» ՍՊԸ
 ք. Երևան, Թբիլիսյան խճ. 20
 «Կոնվերսանկ» ՓԲԸ
 Հ/Հ՝ 193004674290
 ՀՎՀՀ՝ 00840437

[Ստորագրություն]



Տնօրեն

Ա.Ն.Իկոզոյան Ս.Ը
 (ստորագրություն)

Պայմանագրի կողմ

 գտնվելու վայրը _____
 հհ _____
 հվհհ _____

Պատվիրատու

 գտնվելու վայրը _____
 հհ _____
 հվհհ _____

ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ N
ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԿԱՍ ԴՐԱ ՄԻ ՄԱՍԻ ԿԱՏԱՐՄԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԻ
ՀԱՆՁՆՄԱՆ-ԸՆԴՈՒՆՄԱՆ

« » » 20 թ.

Պայմանագրի /այսուհետ՝ Պայմանագիր/ անվանումը՝

Պայմանագրի կնքման ամսաթիվը՝ « » « » 20 թ.

Պայմանագրի համարը՝ _____

Պատվիրատուն և Պայմանագրի կողմը՝ հիմք ընդունելով պայմանագրի կատարման վերաբերյալ « » « » 20 թ. դուրս գրված N _____ հաշիվ ապրանքագիրը, կազմեցին սույն արձանագրությունը հետևյալի մասին.

Պայմանագրի շրջանակներում Պայմանագրի կողմը մատուցել է հետևյալ ծառայությունները՝

N	անվանումը	տեխնիկական բնութագրի համառոտ շարադրանքը	Մատուցված ծառայությունների				Վճարման ենթակա գումարը /հազար դրամ/	Վճարման ժամկետը /ըստ վճարման ժամանակացույցի/
			քանակական ցուցանիշը		կատարման ժամկետը			
			ըստ պայմանագրով հաստատված գնման ժամանակացույցի	փաստացի	ըստ պայմանագրով հաստատված գնման ժամանակացույցի	փաստացի		

Սույն արձանագրության երկկողմ հաստատման համար հիմք հանդիսացած հաշիվ ապրանքագիրը և դրական եզրակացությունը հանդիսանում են սույն արձանագրության բաղկացուցիչ մասը և կցվում են:

Ծառայությունը հանձնեց

 ստորագրություն

 ազգանուն, անուն
 Կ.Տ.

Ծառայությունն ընդունեց

 ստորագրություն

 ազգանուն, անուն
 Կ.Տ.

ԱԿՏ N

պայմանագրի արդյունքը Պատվիրատուին հանձնելու փաստը ֆիքսելու վերաբերյալ

Սույնով արձանագրվում է, որ _____-ի (այսուհետ՝ Պատվիրատու) և _____-ի
Պատվիրատուի անունը Կատարողի անունը

(այսուհետ՝ Կատարող) մինչև 20 թ. _____-ին կնքված N _____
պայմանագրի կնքման ամսաթիվը պայմանագրի համարը
գնման պայմանագրի շրջանակներում Կատարողը 20 թ. _____-ին հանձնման-ընդունման
նպատակով Պատվիրատուին հանձնեց ստորև նշված ծառայությունները.

Ծառայության		
անվանումը	չափման միավորը	քանակը (փաստացի)

Սույն ակտը կազմված է 2 օրինակից: յուրաքանչյուր կողմին տրամադրվում է մեկական օրինակ:

ԿՈՂՄԵՐԸ

Հանձնեց

ազգանուն, անուն

ստորագրություն

Ընդունեց

հայտը նախագծած ներկայացուցիչ՝

ազգանուն, անուն

ստորագրություն